Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-673[3]-22.07.2009,18.04.2011-ՊԻՆ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի 4-րդ հոդվածում «քաղաքացու» բառից հետո լրացնել «նույնականացման քարտը և» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ***2012 թվականի հունիսի 1-ից***:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ կողմից 2011թ. սեպտեմբերի 14-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրային ծառայությունների համարանիշի մասին», «Նույնականացման քարտերի մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	***Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը***	***Առաջարկությունը***	***Եզրակացություն***
«Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 2, մաս 2	Անհրաժեշտ է ամրագրել օրենքով նախատեսված տվյալների փոփոխության դեպքում հանրային ծառայությունների համարանիշի փոփոխման արգելքը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 5, մաս 2	Անհրաժեշտ է հանել հոդվածի 2-րդ մասը, քանի որ այն կրկնում է 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, ինչպես նաև նախատեսել ծնողի ցանկությամբ բնակչության պետական ռեգիստրի կողմից մինչև 16 տարեկան երեխաներին հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու հնարավորություն:	Առաջարկությունն ընդունվել է: 2-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ, ինչպես նաև փաթեթից հանվել է *«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:*
	Հոդված 6, մաս 1	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 6	Նախատեսել դրույթներ նույնականացման քարտերից (հանրային ծառայությունների համարանիշերից) և սոցիալական ապահովության քարտերից հրաժարված անձանց իրավունքների իրացումը երաշխավորելու համար:	Ընդունվել է. հոդվածը լրացվել է նոր մասերով:

	Հոդված 6	Առաջարկվում է նախատեսել օրենքից բխող իրավական ակտերի ընդունման ժամկետները:	Առաջարկությունն ընդունվել է:
«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 2, կետ 2	Հոդվածի 2-րդ կետն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածին:	Առաջարկությունն ընդունվել է. կետը խմբագրվել է:
	Հոդված 3, մաս 1	Անհրաժեշտ է ամրագրել նույնականացման քարտ ձեռք բերելու կամավորությունը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 3, մաս 2	Առաջարկվում է նույնականացման քարտ տրամադրել միայն ՀՀ տարածքում՝ ոստիկանության մարմինների կողմից:	Առաջարկությունն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:
	Հոդված 3, մաս 5 (նոր խմբագրությամբ մաս 4)	Առաջարկվում է դրույթը համապատասխանեցնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքին:	Առաջարկությունն ընդունվել է. 4-րդ մասը խմբագրվել է:
	Հոդված 4, մաս 2, կետ 6	Ընտրական վարչարարությունը արդյունավետ դարձնելու համար առաջարկվում է նույնականացման քարտում նշել նաև քաղաքացու մշտական բնակության վայրի հասցեն:	Առաջարկությունն ընդունվել է. լրացում է կատարվել 3-րդ մասում:
	Հոդված 4, մաս 4	Հոդվածի 4-րդ մասն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածին:	Առաջարկությունն ընդունվել է. կետը խմբագրվել է:
	Հոդված 4, մաս 5	Առաջարկվում է 5-րդ մասի դրույթն ամրագրել պոզիտիվ նորմով:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 4, մաս 6, կետ 5 (նոր խմբագրությամբ կետ 4)	Օրենսդրությամբ զինվորական հաշվառումը հավաստող փաստաթուղթ է համարվում նաև զինկոմիսարիատների կողմից տրամադրվող՝ զինվորական հաշվառման փաստը հավաստող տեղեկանքը, որի մասին ևս անհրաժեշտ է նշել նախագծում:	Ընդունվել է. կատարվել է համապատասխան լրացում:
	Հոդված 4, մաս 8	Անհատական տվյալների տեղեկատվական բազաներում անձի նույնականացումն առավել արագ իրականացնելու նպատակով առաջարկվում է նախատեսել դրույթ անձի մատնադրոշմները վերցնելու վերաբերյալ:	Ընդունվել է. կատարվել է համապատասխան լրացում:
	Հոդված 4, մաս 10	Առաջարկվում է նախատեսել քաղաքացիությունը դադարեցրած անձին նույնականացման քարտը դակելուց	Ընդունվել է. 10-րդ մասը խմբագրվել է:

		հետո վերադարձնելու հնարավորություն:	
	Հոդված 4, մաս 16	Հոդվածի 16-րդ մասն առաջարկվում է հանել, քանի որ նույնականացման քարտերի տեխնիկական բնութագրերն արդեն իսկ ամրագրված են գնման պայմանագրում:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 5, կետ 2	Առաջարկվում է նախագծից հանել օգտագործման համար ոչ պիտանի լինելու հիմքը, քանի որ արդեն իսկ նախատեսված է քաղաքացու ցանկությամբ նույնականացման քարտը փոխանակելու հնարավորություն:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 6, մաս 2	Անհրաժեշտ է երաշխավորել նաև ազատազրկման դատապարտված քաղաքացիների՝ քաղաքացիությունը և ինքնությունը հավաստող փաստաթուղթ ունենալու իրավունքը:	Առաջարկությունն ընդունվել է. կատարվել է համապատասխան լրացում:
	Հոդված 7, մաս 1	Առաջարկվում է նույնականացման քարտը վերցնելուց հետո քաղաքացուն տրամադրել քարտը վերցնելու փաստը հավաստող տեղեկանք:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 7, մաս 4-5	Առաջարկվում է 7-րդ հոդվածից հանել 4-րդ և 5-րդ մասերը, քանի որ նշված անձինք նույնա-կանացման քարտերով ՀՀ տարածքը չեն կարող լքել:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 8, մաս 1	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 8	Անհրաժեշտ է հստակեցնել՝ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը քաղաքացուն տրված անձնագիրը (մինչև տվյալ անձնագրի վավերականությունը լրանալը), օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կհանդիսանա արդյոք անձը հաստատող փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և վերադառնալու համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում:	Առաջարկությունն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:
	Հոդված 8	Առաջարկվում է նախատեսել օրենքից բխող իրավական ակտերի ընդունման ժամկետները:	Առաջարկությունն ընդունվել է:
«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 4, մաս 1	Անհրաժեշտ է ամրագրել անձնագիր ձեռք բերելու կամավորությունը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 4, մաս 2	Վերնագիրը վերաբերում է անձնագիր ձեռք բերելու իրավունքին և անձնագրի վավերականության ժամկետին,	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:

		ուստի առաջարկվում է, վերնագրին համապատասխան, հոդվածում նշում կատարել անձնագրի վավերականության մասին: Անհրաժեշտ է նախատեսել նաև սահմանափակումներ զորակոչային տարիքի անձանց անձնագրի գործողության ժամկետների համար:	
	Հոդված 4, մաս 6	Անհրաժեշտ է նախատեսել մինչև 16 տարեկան երեխային անձնագիր տրամադրելու սահմանափակում այն ծնողի կողմից, ում մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
	Հոդված 4, մաս 7	Առաջարկվում է դրույթը համապատասխանեցնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքին:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
	Հոդված 5, մաս 2, կետ 7	Առաջարկվում է նախագծից հանել 5-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը, քանի որ անձի նույնականացումը հնարավոր է իրականացնել այլ իդենտիֆիկատորներով (լուսանկար, ստորագրություն):	Առաջարկությունն ընդունվել է. կետը հանվել է:
	Հոդված 5	Առաջարկվում է նշել, թե որ մարմնի կողմից է կատարվում համապատասխան նշում արյան խմբի և ռեզուսի վերաբերյալ, ինչպես նաև նախատեսել նշում ամուսնության և ամուսնալուծության գրանցման և պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու մասին:	Առաջարկությունն ընդունվել է. հոդվածի 3-րդ մասը խմբագրվել է առաջարկությանը համապատասխան:
	Հոդված 5, մաս 4	Նախատեսել աջ և ձախ ձեռքերի ցուցամատերի մատնադրոշմները ստանալը ֆիզիոլոգիապես անհնարին լինելու դեպքում այլ մատների մատնադրոշմները վերցնելու հնարավորություն, ինչպես նաև երկրորդ նախադասությամբ նախատեսված դրույթն ամրագրել պոզիտիվ նորմով:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
	Հոդված 5, մաս 5	Առաջարկվում է երեխաների մատնադրոշմները վերցնելու տարիք սահմանել 6 տարեկանը՝ նախագծով նախատեսված 5-ի փոխարեն:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
	Հոդված 5, մաս 7	Անհրաժեշտ է նախատեսել Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք վերապահող փաստաթուղթ ստանալու հնարավորություն նաև անձնագրի վավերականության ժամկետը լրանալու դեպքում:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
	Հոդված 5, մաս 9, կետ 5 (նոր խմբագրությամբ կետ 4)	Օրենսդրությամբ զինվորական հաշվառումը հավաստող փաստաթուղթ է համարվում նաև զինկոմիսարիատների կողմից տրամադրվող՝ զինվորական հաշվառման փաստը	Ընդունվել է. կատարվել են համապատասխան լրացումներ:

	Հոդված 5, մաս 10, կետ 4 (նոր խմբագրությամբ կետ 3)	հավաստող տեղեկանքը, որի մասին ևս անհրաժեշտ է նշել նախագծում:	
	Հոդված 5, մաս 11	Անհրաժեշտ է սահմանել մատնադրոշմները վերցնելու վայրի վերաբերյալ դրույթ:	Ընդունվել է. կատարվել է համապատասխան լրացում:
	Հոդված 5, մաս 13	Առաջարկվում է նախատեսել քաղաքացիությունը դադարեցրած անձին անձնագիրը դակելուց հետո վերադարձնելու հնարավորություն:	Ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
	Հոդված 5, մաս 16	Անհրաժեշտ է նախատեսել նաև անձնագիրը փոխանակելիս քաղաքացուն վերադարձման ենթակա փաստաթղթերը:	Առաջարկության հիման վրա կատարվել է լրացում:
	Հոդված 6, կետ 2	Առաջարկվում է նախագծից հանել օգտագործման համար ոչ պիտանի լինելու հիմքը, քանի որ արդեն իսկ նախատեսված է քաղաքացու ցանկությամբ անձնագիրը փոխանակելու հնարավորություն:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 8, մաս 1	Առաջարկվում է անձնագիրը վերցնելուց հետո քաղաքացուն տրամադրել անձնագիրը վերցնելու փաստը հավաստող տեղեկանք:	Առաջարկության հիման վրա կատարվել է լրացում:
	Հոդված 8, մաս 4-5	Նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասում նշվում է, որ հետաքննության և նախաքննության մարմինը ժամանակավորապես վերցնում է այն կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը, որի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է չհեռանալու մասին ստորագրությունը, սակայն նույն հոդվածի 5-րդ մասում նախատեսվում է, որ կալանքի տակ չգտնվող կասկածյալներին և մեղադրյալներին հետաքննության և նախաքննության մարմիններն անձնագրի փոխարեն տալիս են անձը հաստատող փաստաթուղթ: Անհրաժեշտ է հստակեցնել, թե որ դեպքերում կարող են նախաքննության և հետաքննության մարմինները վերցնել կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը:	Ընդունվել է. 4-րդ մասը խմբագրվել է, իսկ 5-րդ մասը հանվել է, քանի որ որպես անձը հաստատող փաստաթուղթ կասկածյալը և մեղադրյալը կարող են օգտագործել նույնականացման քարտը:
	Հոդված 9, մաս 1	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:

	Հոդված 9	Անհրաժեշտ է հստակեցնել՝ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը քաղաքացուն տրված անձնագիրը (մինչև տվյալ անձնագրի վավերականությունը լրանալը), օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կհանդիսանա արդյոք անձը հաստատող փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և վերադառնալու համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում:	Առաջարկությունն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:
	Հոդված 9	Առաջարկվում է նախատեսել օրենքից բխող իրավական ակտերի ընդունման ժամկետները:	Առաջարկությունն ընդունվել է:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 1	Առաջարկվում է խմբագրվող 195.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սանկցիաները սահմանել նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով, ինչպես նաև 1-ին մասի դիսպոզիցիան համապատասխանեցնել «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի պահանջին:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 7	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:
«Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 1	Առաջարկվում է բնակչության պետական ռեգիստրում մշակվող անհատական տվյալների ցանկում լրացնել նաև կենսաչափական տվյալները:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 3	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:
«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 2	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:
«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 2	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է: